

ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՆՁ ԽՆՁ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ



ՄԱՏ մեծ իմաստ և ընդարձակ նշանակութիւն ունէր տա-
Հինս քերթողութիւն և կամ՝ յանուանող հուքիւն բառն,
ուստի և քերքսոյ ըսելով կ' իմննային՝ բնատուր և գերա-
զանց ոմն հանճար, անուանի պատմադիր, բանասէր և
քերական, ևս և իւր յատուկ առամամբն՝ Բաւնարտեղի կամ՝
տաղաչաւի. այլ աստ իւր բնիկ և հարազատ իմաստովն
նկատելով՝ ինչ ինչ հարեանցի դիտողութիւններ պիտի ընենք անոր
նկատմամբ. և նախ թէ քնչ է բանաստեղծութիւնն և յորում կը զա-
նազանի յարձակ գրութենէ:

Յառաջին հայեցման՝ շատ պարզ և դիւրին կ' երևի այս հարցմանս
պատասխանն. սակայն եթէ ուշադիր մտող նկատելու ըլլանք, պիտի
տեսնենք որ այլ և այլ դժուարութիւնք ընդ առաջ կ' ելնեն. վասն զի
նայն իսկ մեծանուն բանասէրք անմիաբանք են ՚ի սահմանել զայն. —
ոմանք Բանաստեղծութեան իսկութիւնը կը գնեն ՚ի կիղիս, և այս՝
իրենց անհիմն կարծիքը կը հաստատեն Պլատոնի և Արիստոտելեայ
վկայութեամբք: Սակայն շատ անձուկ է այս սահմանս. վասն զի թէ-
պէտ և կեղծ իքն մեծ մասն ունի ՚ի Բանաստեղծութեան, մանաւանդ
ի Դիւցազներգութիւնս և յՈգրերգութիւնս, այլ կան ևս ուրիշ տեսակ
քերթութիւնք, յորս քերթողն իւր սրտին իրական զգացումները կը
բացատրէ, և կամ սողոյգ պատահած գէպեր կը պատմէ և կը նկարա-
զրէ: Իսկ այլք կը սահմանեն զայն՝ Ալուստո և մանուկաբան. բայց
այս սահմանս ալ անճիշտ է և անորոշ. վասն զի կան ևս ուրիշ շատ
արուեստք, որք հաւասարապէս կ' օրինակին զընթացութիւնն և անոր
կը նմանին. և դարձեալ՝ զի նմանողութիւն բարուց և սովորութեանց

մարդկան կրնայ ըլլալ հաւատարագէս թէ 'ի հետեւակ յարձակ գրու-
թեան, և թէ 'ի ճոխ և 'ի վեցմբանաստեղծութեան:

Ուրեմն ամենէն աւելի ճիշդ և գեղեցիկ սահման՝ զոր կարենամք
տալ բանաստեղծութեան, ըստ կարծեաց անուանի բանասիրաց՝ է այս.
« Եւստորուն և անձնաւորեալ յեզու մի կրից և երեւակայւորեալս՝
յաւանիս բացաւորեալ յարիւսկան վանկերով և անդամովք բառից »:

Պատմագիրն, իմաստասէրն և ճարտասանն կը խօսին ուղղակի մար-
դուս մտաց հետ. և անոնց նպատակն է համոզել, խրատել և հրահան-
գել: Իսկ բանաստեղծութեան գլխաւ որ նպատակն ըլլալով՝ զուարճա-
ցընել, յուզել կամ գորովել, ուստի և ուղղակի կը խօսի մարդուս կրից և
երեւակայութեան հետ: Այն, բանաստեղծութիւնն ալ կարող է և պար-
տի խրատել և ուղղել, ապա թէ ոչ՝ սին և անշահ արուեստ մի կ'ըլլար.
սակայն ոչ ուղղակի և անմիջաբար կը գիմէ 'ի սոյն վախճան, այլ ան-
ուղղա՝ ի՛ զուարճացընելովն և գորովելով զսիրտ: Երբ բանաստեղծն կը
պատահի այնպիսի առարկայի մի, որ կը վառէ իւր երեւակայութիւնը,
կրբերը և զպացումները կը զարթուցանէ, միով բանի՝ երբ անոր
միտքն և սիրան կը վառին և կը յուզին, և ներքին ուժգին և բուռն
ազդումն ինչ կը յարգարէ վանի այ արտայայտել իւր զպացումները,
այն ատեն չեն պակսիր անոր գեղեցիկ բացատրութիւնը, ազգու-
գործուածք բանից, արտահանոյ իմաստը և բուռն խօսքեր՝ ըստ կրից և
զգացման արտին: Երբ սկսի գրել կամ խօսել այնպիսին, իր տեսնուի
անոր խօսքերուն և իմաստից մէջ այնպիսի իմն բարձրութիւն գաղա-
փարաց, այնպիսի իմն յոյզ և եռանդն աշխուժից, որ շատ կը տարբերի
'ի պարզ յոյրիկ և 'ի հանդարտ գրութեանց, որք սովորաբար խաղաղ
և անզոր փիճակի մէջ գտնուող ոգուց արտայայտութիւնք են:

Բանաստեղծութեան սահմանին մէջ աւելցուցինք ևս՝ թէ կրից և
երեւակայութեան շեղուն յաւանիս կը բացատրի յորտեալ անգամն և
ի վանկս բառից. վասն զի թէպէտ ընդհանրագէս քերթութիւնք որո-
շեալ չափովք և անգամովք կը գտնուին, և այնու կը տարբերին յարձակ
գրութեանց, սակայն կան ևս շատ բանաստեղծութիւնք՝ այնպէս իմն
արձակ և ազատ չափով գրուած և անյանգ, որ շատ էր մտենան
արձակ գրութեանց, — և ընդհակառակն կան այնպիսի արձակ գրու-
թիւնք կամ թարգմանութիւնք, այնպէս իմն չափակցեալք 'ի վանկս
և 'ի վերջաւորութիւնս իւրեանց, այնպիսի գեղեցիկ կերպով շարա-
կարգեալ բառքն և շեշտաւորք, որ գրեթէ չեն զանազանիր յառա-
նուոր գրութեանց: Առաջնոց օրինակ կրնանք տալ մեր Հայկական
կամ Գիշտակներգական կոչում չափն, յորում քերթողն աւելի
անգամութիւն ունի ըստ արտին զպացման և իմաստին, ըստ ներդաշնակ
քաղցրձայնութեան տօյլին՝ երկարել կամ համառօտել վանկերը, միշտ
'ի նկատի ա՛նելով չարիաբանութեան կանոնները: Իսկ երկրորդաց
օրինակ ունիւք յրակեցիկիկ թարգմանութիւնս մեր Աստուածաշունչ

գրոց. օրինակ իմն, Մովսիսի, Դեբարայի և այլոց մտաբանելից օրհնութիւնք, Սաղմոսաց և Յովսայ գրքերն. զորս այնպիսի սրբակ, պահան և վայելուչ լիզուով թարգմանեք են մեր երանաշնորհ Հայրքն, որ սո միայն սոսկ բանաստեղծութիւն կամ ապրաչարութիւն մի կը տեսնենք անոց մէջ, այլ և գերագոյն և գոգցես թէ աստուածային իմն ներգաշնակութիւն կ'ազգէ 'ի սիրտս ընթերցողաց: Եւ այսու ճշտ յայտնի կ'ըլլայ թէ բանաստեղծութեան իսկութիւնն չէ կայացեալ 'ի չափաբանութեան, այլ ինտստից և բացատրութեանց. եղանակին և ոճոյն մէջ. մինչև անգամ 'ի գէպս ինչ ոտանաւոր և արձակ գրութիւնք այնպէս իմն կը շփոթին ընդ իրեարս, որ շատ գծաւարին կ'ըլլայ սրոշել ճշդիւ և սահմանել թէ ո՞ր կը վերջանայ պերճարտութիւնն և ո՞ր կը ս'սի բանաստեղծութիւնն: — Բանաստեղծութեան վերջը գրուած սահմանին. ճշգրտութիւնն. աւելի եւ յայտնի պիտի ըլլայ անոր ծագման սկզբնաւորութեան պատմութենէն:

Բանաստեղծութիւնն հաստատեալ և գրոշմեալ ըլլալով 'ի բնէ մտքը զուս սրտին մէջ, հաւատարապէս կը պատշաճի ամենայն տգգաց. և ամենայն ժամանակաց. ուստի և ամենայն մարդ. արպակ աբ ազէտ և անվարժ ըլլայ յստմունս, միայն թէ սնննոց սիրտ կիրք և զգացումն, 'ի հարկէ պիտի ունենայ իւր փենաց շրջանին մէջ, նաև ինչ ինչ ժամեր և վայրկեաններ բանաստեղծութեան: Ազգս աւրեմն պէտք չէ Բանաստեղծութեան սկիզբը կամ ծագումը փնտրել այս կամ այն ինչ ազգին մէջ, այլ բովանդակ մարդկութեան պատմութեան մէջ: — Սա կայի Յոյնք՝ անձնապատիւք իրենց ազգին ընծայելու ամենայն արտես. այց և ճարտարութեանց գիւտս, Բանաստեղծութեան կը ծագումը և սկիզբը կը գնին յարժեատէ, 'ի Լինաէ և 'ի Մոսոէտէ: Թերեւս երբեք Բանաստեղծութեան պայտիս անտամբ մտքի իկ, որք առաջին երգահայրը կ'աւր ըլլան այն յունական պայծառ և զուարթ երկիւրին տակ, այլ շատ յոռ գալ քան զնոսա՝ կայր Բանաստեղծութիւնն այնպիսի ազգաց մէջ, որք և ոչ բնաւ տնայն անստնքը ըսեր էին: Մեծ ապէս կը սիրողի մեկն է թէ համարի որ Բանաստեղծութիւնն և երաժշտութիւնն միայն բազալ քակիրթ և հրահանդեալ տղարց արտեսաբ եղած ըլլան. այլ հազարակ են բովանդակ իսկ մարդկութեան. թէպէտ և աստնք եւ արիշ արտեսաից և ճարտարութեանց նման, բայտ նպատակոց սրտածն աւթից և հոնդամանաց՝ աւելի կամ սակաւ. զարդարիք և յար աշխարհ մեր են ինչ ինչ ազգաց և աշխարհաց մէջ, արտն եթէ յայլաւ: Բանաստեղծութեան սկիզբը գտնելու համար պէտք է շրջիլ և փնայ յայնաւառ և յանապատս, պէտք է ելանել մտքը մինչև 'ի ժամանակս գրագրք. 'ի հովիւ. Ժողովրդոց, այսինքն է՝ յառաւել հին և վաղեմի գարս, յարս պակասին մարդկանց բարքն և սովորութիւնք և ամենայն հանդամանք կենաց՝ պարզ և անպատեղիք էին:

Սովորորաբ կ'ըսուի թէ բանաստեղծութիւնն յաւալ է. քան զարձակ

գրութիւնն. սոյն բանս կը հաստատեն իւր թմենայն նախնի մատե, նազիրք. այլ թէ ինչ իմաստով ըսուած է այս խօսքս, ոչ ումէնքն լուս և ճիշդ կ'իմանան, Յիրաւի՛ չէ եղած բնաւ ժամանակ ինչ կամ ընկե-
րութիւն մի, յորում մարդիկ ստանաւոր ստղիւք լստած ըլլան իրարու հետ. մանաւանդ թէ հաւանական կ'իբրիի, որ առաջին մար-
դիկն անհարթ եւ անընդել սճերով և բանիւք սիսան՝ փոփոխակի
իրարոս հազորդել իրենց մտածութիւնքը և կարօտութիւնքը: Այլ
զիտեմք ևս, թէ 'ի հին ժամանակաց անտի ընկերութեան՝ կային ինչ
ինչ սահմանեալ օրեր, յորս 'ի մի կը ժողովէին մարդիկ՝ միաբանու-
թեամբ կատարելու իրենց հանդէսները, զոհերը և ուրիշ այլևայլ
հասարակաց ժողովները. և այս ամէն հանդիսից մէջ իրենց զլիսաւոր
չորժն, ծէսն և արարողութիւնն՝ էր երաժշտութիւն, երգ և պարահան-
գէս: Հմուտ ճանապարհորդաց գրուածներէն կը տեղեկանամք՝ որ
յԱմերիկա, յԱփրիկէ և ուրիշ վայրենի աշխարհաց մէջ չի տեսնուիր
բնաւ ուրիշ բանի մի զարգացումն և յառաջադիմութիւն՝ բաց յերանժըշ-
տութենէ. իրենց ամենայն կրօնական հանդէսները և արարողութիւն-
քը երգովք կը կատարեն. երգով կ'սղբան իրենց հասարակաց և սոսն
կական թշուառութիւնքը, բարեկամաց մահը, քաջամարտիկ զօրակաւ
նաց կորուստը. այնու կը հռչակեն իրենց յաղթանակները, իրենց
ազգին և զիւցողանց մեծագործ արութիւնքը. ոչնու կը վտտեն և կը
յորդօրեն զիրար 'ի գործսքաջութեան 'ի պատերազմի, և կրելու զմահ
և զվիշտս անյողգտող պնդութեամբ:

Ահա այսպիսի անհարթ և անպաճոյճ արտադրութիւնք եղան նախ
նական սկզբունք բանաստեղծական գրութեանց, զորս կ'ազգէր 'ի
սիրտս այն անհրահանգ եւ անընդել մարդկան իրենց երեակայութիւնն
կամ կրից աշխոյժն, երբ կարևոր և օգտակար զիպաց արդարք կը
վտտէին և կը յորդօրէին զանոնք, և կամ կը ժողովէին 'ի մի 'ի
գումարմունն հասարակաց և կամ 'ի հանգէսս: Եւ այսպէս ահա կրկին
այլևայլ լեզուք կը նշմարին անոնց մէջ, մին՝ սովորական և ընտանի,
զոր կը գործածէին իրենց առանձնական կենաց և ածնական հան-
դիսից մէջ, իսկ միւսն՝ բռն և սաստիկ, զոր 'ի կիր արկանէին
հասարակաց աղետից և կարօտութեանց մէջ. յորում կը տեսնուէր
անտվոր կարգ մի բանից, յանդուգն և սաստիկ ձևեր իմաստից և
բառից: Փոխանակ բառերը սովորական կարգաւ զնելու, այն կարգաւ
կը շարէին՝ ինչ կերպով որ կը ներկայացընէր իրենց երեակայու-
թիւնն, և կամ ինչ որ աւելի կը յարմարէր այն կրից և զգացման՝ որ
կը տիրէր իրենց վրայ: Եւ այս բանս 'ի փորձոյ իսկ գիտեմք՝ զի երբ 'ի
սաստիկ կրից կը յուզուի, արտաքին առարկայքն մեզի չեն երկիր
ինչպէս որ են յիրականութեան, այլ չափազանց և սաստիկ բացա-
րութեամբ կը մեծցընեմք զամենայն իր, և կը պահանջեմք որ այլք
ևս ունենան նոյն եռանդը, նոյն զարմացումը և զգացումը՝ ինչ որ

մինք ունի՞ք նոյն առարկային նկատմամբ: Մանր և պզտիկ իրերը կը համեմատեմք մեծամեծ իրաց հետ, և ո՛չ այսչափ միայն, այլ հեռաւոր ներն իսկ մօտ կը կոչեմք՝ որ մեզի հետ զարմանան, մեզի պէս զգտ, ցուին, և մինչև իսկ անշունչ իրաց հետ կը խօսիմք: Աստի ոհա յառաջ կու գան՝ ըստ չափու զանազան շարժմանց հոգոյ, այն ամէնայն բացատրութիւնք՝ զորս որդ հոգատրական անուամբք կոչեմք Չափազանցութիւն, Դիմումներքիւն, Եմանութիւն, Պէշարքանութիւն, և այլն. որք ուրիշ բան չեն՝ բայց միայն բանաստեղծութեան բնածին և սկզբնական լեզուն՝ խուժազուժ և վայրենի ժողովրդոց մէջ:

Մարդս ՚ի բնէ բանաստեղծ է և երածիշտ: Նոյն մղումն որ կը վառէ ՚ի մարդն եռանդնոտ և բանաստեղծական ոգի մի, յառաջ կը բերէ ևս ներդաշնակութիւն ինչ ձայնի յարմար ամենայն զգացմանց՝ ուրախութեան, ցաւոց, զարմացման, սիրոց և բարկութեան: Չայնն մասամբ ՚ի բնէ և մոտամբ յունտիութենէ՝ այնպիսի իմն զօրովական ազգեցութիւն մի ունի երեակայութեան վրայ, որ կը զուարճացընէ մինչև ամենէն աւելի բարբարոսներն իսկ և վայրենիները: Երպժշտութիւնն և բանաստեղծութիւնն ունեցան մի և նոյն ծագումը, ՚ի նոյն պատճառաց յառաջ եկան, և երգով միացան իրարու հետ. և քանի որ միացեալք էին՝ անեյուպին փոփոխակի իրարու զօրութիւնը և ազդեցութիւնը: Հին բանաստեղծք, որ և Հապկերդուք կ'ըսուէին, կ'երգէին իրենց յորինած տաղերը. և աստի սկսաւ Տաղաշարիւրսիւնէն, որով այնպիսի իմն արուեստի և ճարտարութեամբ կը շարեթի բտուերը, այնպիսի չափով և թուով, որ ներդաշնակ քաղցրամայրութիւն մի կը ձևանայր. ՚ի սկզբան այս չափս այնչափ քաղցր և ներդաշնակ չէր, այլ երթալով այնչափ յառաջագիմեց, մինչև առանձին տրսւեստ մի եզաւ Տաղաշարութիւնն:

Այս ըսածներէս կը հետևի՝ որ մարդկային հանճարոյն առաջին տը տաղրութիւնք՝ որք կամ աւանդութեամբ հասան մեզի, և կամ ՚ի դեր տանուեցան ապա, բոլորն ալ եզան բանաստեղծականք, վասն զի բանաստեղծութիւնն միայն կարող էր յինքն գրաւել այն մարդկան ուշադրութիւնը, սրբ զեռ ևս տմարդի և անկիրթ վիճակի մէջ կ'ապրէին: Իմաստասիրական բանավարութիւնք և պատճառաբանութիւնք, կամ թէ մեզմ՝ և հանդարտ ճառախօսութիւնք՝ չէին կարող հզոր օւզեցաւթիւն մի ընել այնպիսի ժողովրդոց վրայ, որք իրենց բովանդակ կեանքը կ'անցունէին յորստգրութիւնս և ՚ի պատկրազմունս: Այլ մի ինչ կարող էր այնպիսի իմն զօրութիւն և ազդեցութիւն ունենալ և ունի կընդրաց մտազրութիւնը յինքն ձգել, բայց յեռանդուն և յազդու զօրութենէ բանաստեղծութեան և երածշաութեան: Այսպիսի հնարք մի ՚ի գործ գրին հին օրէնագիրք և ազգագետք, որք կ'ազէին կրթեղ իրենց ժողովուրդքը, այս բանս եզաւ միակ միջոց և հնարք իրենց օրէնք ները և բարեկարգութիւնները յետնոց աւանդելու, վասն զի յառաջ

քան զգիւս գրաց, երգով միայն կրնային միտքերնին պահել այն բառերը. այն որոշեալ չափերն և թիւերն օգնեցին մարդուս յիշողութեան: Հարք կը կրկնէին իրենց որդւոց այն երգերը, որպէս զի տարուն, և այսու բերանացի աւանդութեամբ ազգային երգոց հասին յեանոց ձեռքը նախնի դարուց պատմական ծանօթութիւնք և օրէնսգրութիւնք: Սոյն բանո կը հաստատան և ամենայն ազգաց պատմութեանց հնաւանդ յիշատակարանք: Յունաստանի առաջին ժամանակները՝ քուրճք, իմաստասէրք և օրէնագիրք իրենց պատուէրները և օրէնքները յատանաւոր տազս աւանդեցին: Ապոլոն, Արփէս և Ամփիոն՝ առաջին քերթողք Յունաց, եղան առաջին հրահանգիչք մարդկան, առաջին օրէնագիրք և առաջին հաստատարք քաղաքածոցով ընկերութեանց: Ինչպէս կը հաստատէ զայս և ինքն իսկ Արապտու իւր քերթողական Արուստին մէջ այո խտրութիւնս.

« Զվարդազ մարդիկ սարքն Արփէս և աստուածոց պատգամու որ Յարեանց է՛ի շաղակեր վարուց կենաց գործոց 'ի բաց, Աստի զվագերս համբուեալ և զամենիս կակել առիւծս Եւ Ամփիոն՝ ոտանին պատմի կերտողըն Քերտացոց Ըջքարինս 'ի ձայն փանդոսն զընչեցուցեալ՝ ոտանցանել, Եւ քուրճ սղփանք տանել բերել յուպէտ յուկամ: Այս երբեմն իմաստութիւն եղեալ՝ ընտրել ըզգօնարար Ըզտուրսըն 'ի պըծոց և զաշխարհին յիրաց անձնիւր, Ի մարդ կարճել խառնից, զընել գաղինքս կա՛ամբուց, Աւան կառուցանել, զըծել օրէնս 'ի տախտակի: Այսպէս եին 'ի դիւցական ճարտարս ու 'ի սապս անուն և փառք: Յետ սոցս մեծըն Հոմեր և Տիրտէս 'ի նուագս երգոց Զօգիս արիականս յարիտական վտոցին գտ, Տաղիւք պատգամք խօսեցեալք և ճանապարհ կենաց ցուցեալ, Պիլերեան եղանակք թագաւորաց խընդրեալ շնորհք: Եւ խաղուց եկեալ 'ի գիւտ՝ երկայն երկոց դալ և հանդիստ »:

(Արատ. Արուեստ քերթողական 389-405):

Մինով և թալէս իրենց յօրինած օրէնքները ուսուցք և քնարովք երգեցին. և գրեալով է մինչև 'ի ժամանակս Հերոդոտոսայ՝ Յունաց պատմութիւնն լի է շարք մի առասպելայոց բանաստեղծական պատմութեամբք:

Սոյն բանիս հաւատարկ ոնիմք ևս 'ի մեր ազգային պատմութենէ, յորում կը տեսնեմք որ մեր առաջին մատենագիրքն և պատմագիրք եղեր են քերթողք և երաժիշտք, ինչպէս են Գողթան զաւտաին երգիչքն, որք միշտ 'ի տունս իշխանաց և յօրքունիս կը շրջէին, ներկայ կը գտնուէին յամենայն հանդէսս նոցա, յամենայն խնջոյս խրախուժեանց և յամենայն պատերազմունս, որոց ամենուն յարմար քերթութիւններ կը յօրինէին և կ'երգէին: Եւ յերաւի շատ հին

պատմութիւններ պիտի գիտնայինք արզ մեր ազգայնութեան նախնի ժամանակաց նկատմամբ՝ որք մինչև ցարդ ծածկեալք են 'ի միտութեան, հիվէ անոնց բովանդակ քերթուածքն հասած ըլլային մեր ձեռքը: — Այս բանս կը տեսնուի նաև առհասարակ ուրիշ ազգաց մէջ ալ: Սկիւթացոց շատ թագաւորք Սքալտեր կը կոչուէին, որ քերթող կամ բանաստեղծ կը նշանակէ. և անոնց հետագոյն պատս մագիթք իրենց զիտուոր ծանօթութիւնները կ'առնուի իրենց քերթողական տաղերէն: Կելտաց ազգին մէջ շատ գորմնաւորի և սրբազան անձինք համորուած էին Քալտայ, և շատ մեծ ազդեցութիւն ունէին բովանդակ ազգին վրայ, որք թէ բանաստեղծք էին և թէ երա, ժիշտք միանգամայն:

Առտի կը հետևի՝ որ ինչպէս ամենայն աշխարհաց հնութեանց մէջ պէտք է փնտռել երգեր և քերթուածներ, այսպէս նաև պէտք ենք գիտնալ թէ որ և է ազգի առաջին դարաց մէջ այսպիսի քերթուածոց նիւթն գրեթէ մի և նոյն էր. վասն զի 'ի նոյն պատճառաց և 'ի նման հանգամանաց յորդորեալք կը գրէին այն բաները: Գրեթէ ամենայն ազգաց հնուանդ քերթուածոց և երգոց մէջ կը գտնուի գրուաիք գից և դիցազանց, գովութիւն իրենց անուանի և քաջ նախնեաց, վէպք պատերազմական կտորածոց, նուազք յազիմութեան, երգք հառաջանոց և սղբոց 'ի վերայ թշուառութեան և մահուան բարեկամոց: Անոնց ամենուն մէջ կը տեսնուի առ հասարակ մի և նոյն հուր և եռանդն աշխուժից, տնհարթ և անկարգ՝ այլ կտրակ և եռանդնոտ տճ մի, աշխոյժ և նորանոր բացատրութիւնք. ահա սասնք են ընդհանուր յատկութիւնք ամենայն նախնի քերթուածոց: Այն ստատիկ և զօրաւոր ձևն Զափազանցութեան՝ զոր ընդհանրապէս եւրոպացի մասնագիրք սովոր են կոչել արևելեան ձև կամ Եղիստակ (վասն զի ամենահին քերթութիւնք յԱրևելից սրբուեցան յԱրևմուտս), չէ նա սոսկ արևելեան ձև, այլ և արեմտեան՝ նախնի դարաց մէջ, մասնաւոր թէ հասարակ էր այն ամէն ազգաց առաջին դարերուն մէջ, յորս տակաւին բանաստեղծութիւնն և երաժշտութիւն 'ի մանուկ հասակի էին: Այն պարզութեան ժամանակաց մէջ շատ կը նմանէին իրարու՝ մարգկանց սովորութիւնքն և դադափարներն. այլ ապա հետզհետէ այլ և այլ փոփոխութիւնք պատճառ եղան անոնց բարուց և կենցաղոյն փոփոխութեանց. և այս փոփոխութիւնս՝ ոչ միայն 'ի քաղաքականին տեղի ունեցաւ, այլ մեծ ազդեցութիւն ըրաւ ևս և 'ի մատենագրականին: Եւ այսպէս ահա ըստ փոփոխութեան կլիմայի և այլ զանազան օրէնագրութեանց և փոփոխութեանց, փոփոխեցաւ ևս և բանաստեղծութիւնն: Ըստ չափու զարգացման և քաղաքականութեան ազգաց, և ըստ կատարի կամ ամէն բարուց ժողովրդոց՝ բանաստեղծութիւնն ևս նոյն կնիքը և գրոշմը կը կրէր: Օրինակ իմն, գոթացի քերթութիւնք գրեթէ

բովանդակ վայրագ. և կտտաղի են, որք միայն պատերազմն և արիւն կը շնչեն. իսկ ընդհակառակն ճենացի երգոց և քերթուածոց նիւթք միշտ մեզմ' և հանդարտ եղեր են: Կելտական բանաստեղծութիւնք թէպէս և ընդհանուր պատերազմական սգով գրեալք են, սակայն 'ի ժամանակս Ռոտինու' ստացեր էին բուռա'րան փափկութիւն և վայելչութիւն:

Հիլլեն ազգոց մէջ առաջին բանաստեղծութիւնն իմաստասիրական վսեմ ժանրութեամբ մի երեցաւ, ինչպէս կը պատմուի Ռրփէստի, Լինոսի և Մուսէոսի գրուածոց նկատմամբ, որոնք իրենց երգերուն մէջ խօսեր և գրիւր են՝ արարչագործութեան, աշխարհիս ձեւանալուն և իրաց ծագման վրայ: Յիրաւի ուրիշ ամէն ազգացմէ աւելի Յոյնիւն եղան, որ զարգացան յիմաստասիրութեան, և յառաջագէմ փափուկ և ճարտար արուեստից մէջ:

Արեւելի անուանի բանաստեղծքն եղան Արաբացիք և Պարսիկք: Ինչպէս ուրիշ ազգաց մէջ, նոյնպէս և ասանց մէջ բանաստեղծութիւնն եղաւ միակ միջոց աւանդելու ապագայից իրենց օրէնսդրութիւնքը և վարդապետութիւնքը: Յիրաւի շատ անուանի են Արաբացւոց ոտանաւոր գրութեանց չափքն, որոնք երկու տեսակ էին. անոնցմէ մին կը կոչէին՝ արձակ մարգարիտ, իսկ միւսը՝ կապեալ կամ ազուցեալ մարգարիտ: Արձակ մարգարիտք կը կոչուէին այն քերթութիւնք, որոնց իմաստքն և տողք բարդովին իրարմէ անջատեալք էին, և անոնց բովանդակ գեղեցկութիւնն կը կայանար իմաստից և բացատրութեանց վսեմութեան և նրբութեան մէջ: Իսկ ազուցեալ մարգարիտք կը կոչուէին, երբ տողերուն իմաստքն իրարու հետ կապեալք էին և որոշեալ չափերով և անդամներով միացեալք: Բայց Արաբացւոցմէ աւելի առաջ Յոյնք եղան՝ որք իրենց գրութեանց մէջ կարգաւորեալ ոճ մի մուծին, և մնասանց աւելի ճիշդ շարայարութիւն և կապակցութիւն իմաստից:

Նախնի ժամանակաց մէջ ամենայն զանազան տեսակք բանաստեղծութեան խառն կը գտնուէին մի և նոյն գրութեան մէջ, ըստ որում աշխուժն և եռանդն կամ դիպուածական պատահալք կ'ուղղէին բանաստեղծին խանդը: Սակայն երբ զարգացան մարդկային ընկերութիւնք և արուեստք, բանաստեղծութիւնն ալ սկսաւ այն զու նազան ձևերը և անուոններն առնուլ, ինչպէս որ են հիմակ և կը կոչուին, իւրայայտ քերթողական արտադրութեանց այն նախնական և անհարթ վիճակին մէջ իսկ կրնանք դեռ ևս գիւրաւ գտնել և որոշել կանոնաւոր բանաստեղծութեան զանազան տեսակաց սերմանքը և ակզբունքը: Անշուշտ առաջին քերթողական գրութիւնք եղած պիտի ըլլան ամէն տեսակ երգք և տաղք, ըստ որում երգիչքն կամ 'ի կրօնական զրացմանց կը վառէին, կամ յուրախութենէ կը յորդորէին, կամ 'ի սիրոյ, կամ 'ի բարկութենէ, և կամ յայլ ինչ

կրից: Ուստի և բնականաբար, Եղեռնը պետք է լինի պատճառն եղած պիտի ըլլայ ողբն կամ սուգն բարեկամաց մահուան վրայ: Իսկ իրենց գիւցազանց մեծամեծ արտօթեանց և շահատակութեանց պատմութիւնն յառաջ բերու այն բանաստեղծութիւնը՝ զոր մէջ 'Գրեցողիկերգութիւն կոչեմք: Սակայն գոհ չըլլալով 'նկարագրել միայն զանոնք 'ի գրի, ու զեր են 'ներկայացնել զանոնք բազմութեան առջև՝ մեծ անելով 'ի տեսարանի զանազան երգիչներ, որք կը խօսէին իրարու հետ իրենց գիւցազանց բարուց և սովորութեանց համեմատ. և այս ահա եղաւ. նախնական սկզբունք քառերկրաբնուն:

Ինչպէս բանաստեղծութիւնն, այսպէս ևս ամենայն գիտութիւնը և արուեստը նոյն իրին խառն 'ի խառն զանգուած մի կը կազմէին: Պատմութիւն, Պերճախօսութիւն և Բանաստեղծութիւն իրարմէ չէին զանուգանդիւրջանաճի գեռն ևս ճշգրտ. որոշեմը՝ չէին անոնց սահմաններն. — ո՞վ որ ուզէր յուզել, համոզել, վառել իւր հայրենակցացոյ յաշխոյժը, երբոյ 'ներգանահայտութեամբ կը բացատրէր իւր կայծիքը և զլուցումներն: Այն դարաշրջանին մէջ մի և նոյն անձն՝ էր միանգամայն մշակ, գործիք և զինուոր: Բայց հեռագհետէ երբ արուեստը զարգաւ, նորով սկսան թաժուել և զատուիլ իրարմէ, նոյնպէս որոշեցան և զատուեցան ևս գիտութեան այլ և այլ ճիւղք:

Այս բանն այն ատեն պատահեցաւ, երբ գրութեան արուեստն գտնուեցաւ: Այն ատեն սկսան անցեալ գիպաց յիշատակները 'ի գիր տանուել. մարդիկ գոհ չեղան միայն զգացուելով կամ զուարճանալով, այլ ուզեցին ևս ուսանիլ և հրահանգիլ. — սկսան խորհրդածել և բանավարել իրենց կենաց տպահատմութեան և երջանակութեան վրայ, և կորեւրագոյն համարեցան ինչ որ իրական էր և ոչ տաաապել ըստ: Այն ատեն պատմագիրն մէկգի թողուց բանաստեղծութեան գեղեցիկ և փայլուն դարձուածները, և սկսաւ արձակ բանիւք գրել. և ջանաց անցեալ գիպաց հաւատարիմ պատմութիւն մի աւանզել աւ պաշտոյցից: Իսնճատառէրն սկսաւ իր նուրը և բանական փաստիք և ցուցակութեամբ թուտուրել և համոզել զմիտքը. — իսկ ճարտասանն սկսաւ իւր համոզիչ պատճառարանութեամբ և փոփոխ նկարողիւր. ներառն ձգել իրեն և զորովել ունկնդրաց սիրտը: Բանաստեղծութիւնն ևս եղաւ առանձին արուեստ մի, որոյ զխառը նպատակն ըլլալով զուարճացնել և միանգամայն այս միջոցով հրահանգել զմարդիկութիւն, իրեն գրութեան առարկայ և 'նիւթ ընտրեց ինչ որ աւելի յարմար և պատշաճ էին 'ի յուզել զկիրս և զերեւակայութիւն:

2. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՐՈՍԵԱՆ